



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 33-Ա

#### ՎԵՐԱՔՆՆԻՉ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՀՈՎԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԱՐՓԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ՆՀ-374-Ա և թիվ ՆՀ-375-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորներ Հովիկ Շահնազարյանին և Հայարփի Զարգարյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

### Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 6  
ք. Երևան